ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> հունվարի 2013թ. N: 05 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻՆ 1997 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ԵՎ ԱՎԱԳ ՏԱՐԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական հաշվառման կարգի>> 8-րդ և 9-րդ կետերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2013 թվականի հունվար-մայիս ամիսներին զորակոչային տեղամասերին կցագրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում հաշվառված (Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես հաշվառում չունեցող, սակայն փաստացի բնակվող) 1997 թվականին ծնված, 16 տարին տվյալ տարում լրացող և նախկինում տարբեր պատճառներով հաշվառումից դուրս մնացած ավագ տարիքի պատանիներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող և դատարանի որոշմամբ ազատազրկման վայրում պատիժը կրող անձանց: Տարբեր պատճառներով նշված ժամանակահատվածում կցագրում չանցածների կցագրումն իրականացնել ամբողջ տարվա ընթացքում:

2. Կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքային զինվորական կոմիսարիատներում ստեղծել զինապարտների կցագրման հանձնաժողովներ՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքային զինվորական կոմիսարներին՝

ա. կազմել զորակոչային տեղամասերին պատանիների կցագրման նախապատրաստման և անցկացման միջոցառումների աշխատանքային պլան, որտեղ ընդգրկել համայնքների, ուսումնական հաստատությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, հիմնարկների և համատիրությունների ցուցակները.

բ. ավագ տարիքի պատանիներին, ովքեր տարբեր պատճառներով ժամանակին չեն կցագրվել և դուրս են մնացել զինվորական հաշվառումից, ընդգրկել կցագրման ներկայանալու ընդհանուր հաշվարկի մեջ.